

ասել ընդ իս Բանգրատիէլի թէ գոհ եմ զժողովրդէն ուղղափառաց զի բարի օրինակ ետուն ամենեցուն:

Ի քաղաքին Արզուում մնացին ի մերոց շորս եւեթ տունք, որք ոչ յօժարեցան: Երանել անտի, եւ ձնտոյ Յակոբ բաղիշեցի անց ի Մուշ, զի սեղանաւոր էր էմին փաշայի որ անդ. եւ այլ եօթն տունք ուղղեցան ի Տրապիզոն, ի Խրիմ ակն եղեալք: Ի Հայոց մնացին իբրեւ հարիւր տունք. պարագլուխ նոցա Քէօսէօղլու Համբարձում արապկերցի, այլ գործօն եւ ճոխ, որոց ի վերջնումն ատուր եհաս եւ նոր Առաջնորդ ի Պօլսոյ, որ երբեմն վէթիլն էր Պատրիարքին Բարթողիմէոս վլայրդլապետին, գործով որպէս թէ յետս նահանջել զժողովուրդն. այլ օգտեցաւ եւ ոչինչ, զի ըստ նորուն իսկ խոստովանութեան առ ոմն ի բարեկամաց անմարթ էր հետեւ հնարս առնել իրացն:

Ի շրջակայ գիւղօրէս ի Հինձք գիւղ երկու եւեթ տունք մնացին ի մերոց հարստագոյնք, եւ միւս եւս ի Խոռանձ: Ի Հայոց գրեթէ կիսով չափ մեկնեցան, եւ այլքն ըստրեցին մնալ ի կալի իւրեանց: Ի գիւղն Ճինիս, ուր էին իբր հարիւր տունք երէց տեղւոյն բարձեալ զամենեպէն ի ձիս եւ ի սայլս, հուր հարկանէ եւ զեկեղեցւոյն, զի մի եւս յուսացեն դառնալ յետս. տեսանէի զնա յուղոջ վարեալ զինու զարդու որպէս քաջ նահատակ պատրաստեալ ի պատերազմ:

Այլ զգունդագունդ խոնել ժողովրդեան ի գիւղօրէից եւ յԱրզուումայ ի վերջնումն ատուր էր տեսանել ի 5 յունիսի, յորում զինուորական հանդիսիւ յանձնեալ զքաղաքն ի ձեռս Փահլիւ փաշայի, որ ի դիմաց սպարապետին Հաճի Հասան փաշայի գայր տիրել քաղաքին: Անցանէր ի Հասանգալէ. մարթիս ասել, թէ ի դրանց Արզուումայ մինչեւ ի Հասանգալէ միջոց ճանապարհի ձիաւորի վեցից ժամուց, էր տեսանել միագօտի բազմութիւն զօրականին եւ գաղթականին եւ կարասույ եւ անասնոց նոցա:

Այլ զի տակաւին մնացին ի գիւղօրէս բազումք յօժարեալք ի ճանապարհ, թողոյր Բանգրատիէլ ի քաղաքին զՔրիստօֆոսու Վօլինկով¹², յոյն ազգաւ, գիտակ տաճիկ բարբառոյ հանդերձ հեծելովք, որպէս թէ մնալ մինչ ի գալուստ սպարապետին, եւ ողջունել զնա յանուն իւր. եւ գործակից հրամայէր նմա զպատուեալն հաղարապետութեան անուամբ Մկրտիչ Թօշօնց, զայլ քաջ եւ ճարտար: Ի վերին երեսս այսու պատճառաւ մնացին նոքա, այլ գործնոցա էր հուսարել զկաց մնաց ժողովրդեան ելելոց, եւ հասուցանէր զկնի իւր:

Ձայսու ժամանակաւ մինչ մեք շուէաք յԱրզուումայ, Ռէնթ¹³ զօրավար Պայազիտու, կրօնին ուղղափառ, դատարկէ գի ձեռին իրում եղեալ զպառն եւ յանձնէ Օսմանցոյն: Բսկ որ անդր Հայք կանխագոյն շարժին քան զկարնեցիս, քանզի զինու մաքառեալ էր նոցա ընդ քուրդս եւ ընդ թուրքս, եւ զբազում ի նոցանէ սրոյ տուեալ ճարակ, վասն որոյ ոչ եւս հնար էր մնալ նոցա անդր: Խնդրեն առնուն զԳեղարքունիս հանդերձ շրջաբնակութեամբն որչափ բաւեցէ ի գաղար իւրեանց եւ խաշանցն. եւ որպէս ասացաւ քսան հազար ոսկի (պաճախի) առնուն փոխ յարքունուստ, ժամադրութեամբ հնգից ամաց հատուցանել անտոկոսի: Եւ զի սահման նոցա մօտաւոր էր, փութանակի փոխին անդր զիւրաւ եւ անաշխատ, զի համօրէն դժուարութիւնն մնաց կարնեցւոց ըստ վերոգրելոցս:

Խաղաղացոցին զժողովուրդն ի շաշտն վանանդայ յանդիման կարս քաղաքի, շու մեծ եւ սահգին, ուր ոչ պակասէին խնամք յարքունուստ, ալիւր տալ կարոտելոցն. սահմանեալ չափն էր մի փութ, որ է իբր երկուսասան

12 Քրիստօֆոսու Վօլինկով—առասական բանակի շտաբ-կապիտան, ակտիվ մասնակցութիւն է ունեցել 1826—1828 թթ. առաւ-պարսկական և 1828—1829 թթ. առաւ-թուրքական պատերազմներին. անմիջականորեն առնչվել է պարսկահայոց և արեւմտահայերի գաղթի խնդիրներին:

13 Ռենտ Իոսիֆ Անտոնովիչ—առասական բանակի զնդապետ: 1826 թ. Աբաս-Միրզայի կողմից պաշարվել էր Շուշու բերդում: 1829 թ. կառավարում էր առասական զորքերի կողմից գրաված Կարսի փաշայութիւնը: